ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

<<ԱՐԵՎՄՏՅԱՆ ԿԱՆԻ>>

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, Կոտայքի մարզ, Մրգաշեն 7 փող., 6 շ., բն. 3 (2408), Հեռ. +374 93 860339 artak78@yandex.com

Նորամարգ-Հրազդանի ավազների հանքավայրի պաշարների արդյունահանման նպատակով նախատեսվող գործունեության հակիրճ նկարագիրը

1.Ընդհանուր տեղեկություններ

Հանքավայրը կազմված է 2 տեղամասերից, որոնցից առաջինը գտնվում է Մասիս խոշորացված համայնքի Նորամարգ բնակավայրի, երկրորդը՝ Արտաշատ խոշորացված համայնքի Հովտաշեն բնակավայրի վարչական սահմաններում: Տարածքները սեփականաշնորհված գյուղատնտեսական նշանակության հողամասեր են, համապատասխանաբար որպես արոտավայր (2հա) և որպես վարելահող (5 հա):

Հանքավայրի պաշարները հաստատվել են ՏԿԵ նախարարի 2023թ. հուլիսի 17-ի թիվ 1391-Ա հրամանով:

Պաշարների հաշվարկման երկրաբանական հաշվետվության մեջ ներառված «Հանքավայրի երկրաբանատնտեսագիտական գնահատականը» բաժնում կատարված հաշվարկների և պաշարների շահագործման սպասվող ցուցանիշների հաշվառմամբ, նախատեսվում է հանքավայրի պաշարների շահագործման հետևյալ **ծրագիրը.**

Նորամարգ-Հրազդանի ավազների հանքավայրում տարեկան նախատեսվում է արդյունահանել 60000մ^3 օգտակար հանածո:

Հաշվարկված պաշարները կազմում են 692.7հազ մ^3, կորզվող պաշարները՝ 583.0հազ.մ^3՝ համապատասխանաբար 114.0 հազ.մ^3 և 469հազ. մ^3 թիվ 1-Բ և 2-Ա բլոկներից:

Բացիանքով շահագործման համար առկա են բոլոր բարենպաստ պայմանները: Նախատեսվում է շահագործական աշխատանքները կատարել 9-ամսյա՝ գարուն-աշուն ռեժիմով, աշխատանքային օրերի թիվը՝ 180, մեկ հերթափոխով, հերթափոխում 334մ^3 օգտակար հանածոյի արդյունահանում, որը փխրեցման 1.13 գործակցի դեպքում կկազմի մոտ 376մ^3:

Շահագործումը նախատեսվում է 2 առանձին բացահանքերով, օգտակար հանածոյի ամբողջ հզորությամբ, մեկական հանքաստիճանով, կատարելով մակերեսային մակաբացում, այն սկսելովհատվածների հյուսիս-արևելյան մասերից: Բացհանքերի հատակները կընդունեն հաշվարկային բլոկների հատակի մակերեսի ձևը, իսկ բորտերը կունենան 45° թեքություն: Արդյունահանման ժամանակ հումքի կորուստները կարող են կազմել մոտ 16%, քանի որ դրանք կմնան բորտերում, իսկ որակի փոփոխություն չի սպասվում:

Մակաբացման գործակիցները 1 և 2 տեղամասերի համար համապատասխանաբար կազմում են 0.28մ³/մ³ և 0.162 մ³/մ³, միջինը՝ 0.185մ³/մ³: Ավազների արդյունահանումը նախատեսվում է ավազամղող պոմպերի, իսկ մակաբացման ապարների հեռացումը՝ էքսկավատորի միջոցով: Նախատեսվում է հանված օգտակար հանածոյի զանգվածը լվանալուց և մաղելուց հետո ուղղակի բարձում գնորդի ինքնաթափ ավտոմեքենաների մեջ՝ վաճառքն իրականացնելով հանքի տարածքից: Մակաբացման ապարների հեռացման համար բավարար է 12տ բեռնատարողությամբ 1 ավտոինքնաթափ:

Բացհանքում կատարվելիք բոլոր աշխատանքները պետք է կատարվեն անվտանգության նորմերի պահպանումով:

2.Նորամարգ-Հրազդանի ավազների հանքավայրում նախատեսվող լեռնակապիտալ աշխատանքները և ենթակառուցվածքները

1.Էքսկավատորով բացող խրամի անցում -10մ x 50մ=500մ², որտեղ՝

ա/մակաբացման ապարներ-500մ² x1.8մ =900մ³,

բ/ավազի հանույթ 3 մ հզորությամբ-500մ² x3մ =1500մ³,

2.Մակաբացման ապարների հեռացում ևս 10մ x 50մ=500մ² մակերեսով,

3.Լվացող-մաղող սարքավորման տեղադրում 10մ x 20մ,

4.Հումքի պահեստ վաճառքի համար- 40մ x 40մ,

5.Պոմպակայան շարժական – 20-30մ՝ քաշող, 150-180մ՝ մղող,

6.Պահակակետ և ավտոպարկ -10մ x 20մ,

7. Էլ. ենթակայան,

8. Մակաբացման ապարների ժամանակավոր լցակույտ,

9.Էլեկտրոնային կշեռք,

10.Ավտոմեքենաների լվացման կայան,

11.Տարածքի օգտագործվող մասի ցանկապատ:

Վերոնշյալ ենթակառուցվածքների նախագծային տեղադիրքը բերվում է կից ներկայացվող 1:2000 մասշտաբի սխեմատիկ քարտեզում:

Նախատեսվող տեխնիկական միջոցները

1. Անվավոր էքսկավատոր,

2.Ավտոինքնաթափ КАМАЗ, 12տ., 2 հատ,

3. Ավտոինքնաթափ ЗИЛ-130, 2 հատ,

4.Ավազամղող պոմպեր, էլեկտրական և դիզելային, ժամում 80-150մ³ արտադրողականությամբ, 2հատ,

5.Կախովի խառնիչ՝ ավազա-ջրային խառնուրդի ստացման համար, էլեկտրական:

3. Նախատեսվող բնապահպանական միջոցառումների համառոտն կարագիրը

Հանքավայրի տարածքը սեփականության իրավունքով պատկանում է ՀՀ քաղաքացի Ռուզվելտ Մինասի Մազմանյանին (անձնագիր՝ AT 0560425, տրված 08.09.2020թ. 009–ի կողմից, հաշվառված՝ ՀՀ ք. Երևան, Էրեբունի 34, բն. 9 հասցեում), որը բաղկացած է 2 հողակտորից: Հողակտորներից մեկը Մասիս խոշորացված համայնքի Նորամարգ բնակավայրի վարչական տարածքում է՝ 2.00347հա մակերեսով արոտավայր, մյուսը՝ Արտաշատ խոշորացված համայնքի Հովտաշեն բնակավայրի՝ 5.4426հա մակերեսով խոտհարք, որոնք միմյանցից բաժանված են Հրազդան գետով: Դրանցից առաջինը օգտագործվել է նպատակային, իսկ երկրորդը՝ մասամբ է օգտագործվել:

Տարածքը ծածկված է 0.6-2.0մ հզորությամբ բուսահողային շերտով և 0.5-1.2 մ հզորությամբ կավային շերտով, որոնց հատակում առկա են 9.4-13.1մ հզորությամբ մանրավազներ և կոպիճ, որոնք և հանդիսանում են օգտակար հանածոն:

Մակաբացման ապարները ժամանակավոր կկուտակվեն որպես ներքին լցակույտ, որից հետո կտեղափոխվեն Տեղամաս 1-ի արդյունահանված տարածքներ՝ ռեկուլտիվացիայի նպատակով: Տեղամաս 2-ի տարածքը հետագայում հնարավոր է օգտագործել որպես ձկնարդյունաբերական ձեռնարկություն կամ որպես լիճ՝ այլ նպատակների համար:

Հանքավայրի տարածքը Հրազդան գետի կողմից շրջափակված է ինժեներական կառույցներով, որոնք արգելափակում են գետի ջրերի մուտքը հարակից մշակովի հողամասեր և ավտոճանապարհներ:

Գրունտային ջրերի ներթափանցումը բացիանքերի տարածք անխուսափելի է, որի պատճառով նախատեսվում է ապագայում մակաբացման ապարներն օգտագործել Հատված 1-ի արդյունահանված տարածքի մակերեսի վերականգնման համար՝ մոտ 107 հազ. մ³ մակաբացման ապարները տեղավորելով միջինը 12.5մ խորությամբ բացիանքի սահմաններում՝ 8000մ² մակերևույթի վերականգնումով:

Հանքավայրի շահագործման ընթացքում և դրա ավարտից հետո նախատեսվում է անվտանգային միջոցառումների համալիր:

-արդյունահանվող տարածքներից անկապատում (Տեղամաս 1-600գծ.մ., տեղամաս 2-1040գծ.մ., ընդհանուր 1640գծ.մ.),

-արդյունահանված փոսերում աստիճանային վերելակների տեղադրում, յուրաքանչյուրում՝ 4 աստիճան, ընդհանուր 8 աստիճան:

-մշտական պահակակետի տեղադրում՝ 1 վագոնտնակ:

Տարածքում վայրի կենդանիների բնադրավայրեր չեն դիտարկվել: Հանքավայրի տարածքի վրա բացակայում է անտառային գոտին և չկան շինություններ: Շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունը նվազեցնելու համար սովորաբար նախատեսվում է չոր եղանակին ճանապարհների պարբերական ջրման աշխատանքներ, սակայն տեղամասը ասֆալտապատ ավտոճանապարհին կից է, փոշեառաջացում չի սպասվում, և ջրման կարիք կզգացվի միայն հանքի աշխատանքային հրապարակում և գրունտային մուտքային ճանապարհներին:

4.Սոցիալական ազդեցությունը

Հանքավայրի շահագործման տևողությունը նախատեսվում է մոտ 10 տարի: Գործունեության ընթացքում բացահանքերն իրենց ազդեցությունն են ունենալու ոչ միայն շրջակա միջավայրի վրա, այլև մոտակա համայնքների սոցիալ-տնտեսական կյանքում:

Արդյունահանման աշխատանքները նախատեսվում է կատարել բացառապես ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան՝ ապահովելով բոլոր տեսակի անվտանգային կանոնների խստիվ պահպանումը:

Հանքավայրի շահագործման կամ փակման արդյունքում բնակչության տարհանման խնդիր չի առաջանա:

Ընկերության ներկայացուցիչները պատրաստակամ են պարբերաբար հանդիպել համայնքների ղեկավարության հետ, քննարկել անհրաժեշտ սոցիալական ծրագրերն ու համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքների բյուջե:

«Արևմտյան Կանի» ՍՊ ընկերությունը նախատեսում է մասնակցություն ունենալ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացին:

Մասնավորապես, նախատեսվում է հանքավայրի շահագործման ողջ ժամանակահատվածում համայնքներում իրականացնել ստորև աղյուսակում նշված (բայց չսահմանափակվելով) համապատասխան ֆինանսա-կազմակերպչական ներդրումներ:

Այսպես.

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Կատարման ժամկետը	Ներդրումների չափը Հազ. Դրամ
1.	Աջակցություն համայնքների զարգացման սոցիալ տնտեսական ծրագրերին	Յուրաքանչյուր տարի	1000.0՝ յուրաքանչյուր համայնքին՝ 500.0-ական
2.	Աջակցություն մանկապարտեզների, դպրոցների և այլ մշակութային օջախների զարգացման ծրագրերի	Յուրաքանչյուր տարի	1000.0՝ յուրաքանչյուր համայնքին՝ 500.0-ական
3.	Աջակցություն համայնքային նշանակության ճանապարհների վերանորոգման աշխատանքներին	Ըստ անհրաժեշտության	Տեխնիկայի տրամադրում
4.	Բանվորական և տեխնիկական նորաբաց աշխատատեղերի համալրումը ազդակիր վարչական շրջանների բնակիչներով	Ըստ մասնագիտական համապատասխանության	Պահպանելով ազդակիր վարչական շրջանների ընդգրկվածության հավասար հարաբերակցությունը

«ԱՐԵՎՄՏՅԱՆ ԿԱՆԻ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ ԱՐՏԱԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

18.08.2023թ.

Նորամարգ-Հրազդանի ավազների հանքավայրի նախատեսվող ենթակառուցվածքների տեղադիրքը

Սխեմատիկ քարտեզ

Մ 1:2000